ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ

ՆԱԽԱՐԱՐԻ

ՀՐԱՄԱՆԸ

29 դեկտեմբերի 2016 թվականի N 137-Ա

ԸՆԴԵՐՔԻ ՏԵՂԱՄԱՍԻ ԸՆԴԼԱՅՆՄԱՆ և ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԺԱՄԿԵՏԻ ԵՐԿԱՐԱՁԳՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 55-րդ, 56-րդ և 57-րդ հոդվածներով, հիմք ընդունելով՝ <ԲԱԶԱԼՏ> ԱԿ-ի 2016 թվականի սեպտեմբերի 13-ի թիվ 06 դիմումը, աշխատանքային փոփոխված նախագծի վերաբերյալ շրջակա միջավայրի վրա ազդեցության և տեխնիկական անվտանգության փորձաքննությունների դրական եզրակացությունները և <Հանրապետական երկրաբանական ֆոնդ> ՊՈԱԿ-ի 2016 թվականի դեկտեմբրի 26-ի թիվ Ֆ-396/16 գրությունը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. <ԲԱԶԱԼՏ> ԱԿ-ին՝ ՀՀ Կոտայքի մարզի Գյամրեզի անդեզիտաբազալտի հանքավայրից արդյունահանում կատարելու համար, թիվ ՇԱԹՎ-29/014 թույլտվության մեջ կատարել փոփոխություններ՝

1) թույլտվության գործողության ժամկետը երկարաձգել 50 տարով, սահմանելով մինչև՝ 2066 թվականի դեկտեմբերի 16-ը:

2) ՀՀ Կոտայքի մարզի Գյամրեզի անդեզիտաբազալտի հանքավայրի 16.12.2004թ-ին տրամադրված 225 874 մ^3 պաշարով հանքավայրի 01.01.2016թ դրությամբ 139 943 մ^3 մնացորդային պաշար ունեցող տեղամասն ընդլայնել՝ 1.X=4456094 Y=8475481, 2.X=4456170 Y=8475330, 3.X=4456316 Y=8475349, 4.X=4456279 Y=8475706, 5.X=4456232 Y=8475712, 6.X=4456211 Y=8475709, 7,X=4456173 Y=8475656, 8.X=4456205 Y=8475508 <ARM WGS-84> կոորդինատային համակարգով բնութագրվող 820 557մ^3 պաշար ունեցող տեղամասով, ընդհանուրը տրամադրելով՝ 1.X=4456020 Y=8475630, 2. X=4456055 Y=8475645, 3. X=4456082 Y=8475670 4. X=4456151 Y=8475660,5. X=4456178 Y=8475672, 6. X=4456209 Y=8475710, 7 X=4456247 Y=8475714 , 8 X=4456283 Y=8475702, 9 X=4456316 Y=8475349, 10. X=4456170 Y=8475330, 11.X=4456170 Y=8475351 <ARM WGS-84> կոորդինատային համակարգով բնութագրվող տեղամասը, տրամադրելով ընդհանուրը 960 500 մ^3 անդեզիտաբազալտի պաշար:

4) հանքի տարեկան արտադրողականությունը սահմանել՝ 19 210մ^3 պաշար:

2. *Աշխատակազմի ընդերքի տրամադրման գործակալության պետին՝*

1) 2 օրվա ընթացքում սույն հրամանի 1-ին կետի համաձայն կատարել փոփոխություն ընկերության՝ օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով ընդերքօգտագործման թիվ ՊՎ-014 պայմանագրում, լեռնահատկացման ԼՎ-014 ակտում և ծանուցել ընկերությանը հրամանը ստանալուց հետո 10-օրյա ժամկետում՝ պայմանագրի փոփոխությունն իր կողմից վավերացնելու մասին:

2) ընկերության կողմից պայմանագրում կատարված փոփոխությունները վավերացվելուց հետո 10-օրյա ժամկետում ընկերությանը տրամադրել օգտակար հանածոների արդյունահանման թույլտվության, պայմանագրի, լեռնահատկացման ակտի փոփոխված փաստաթղթային տարբերակը.

3) ծանուցել ընկերությանը, որ սահմանված ժամկետներում պայմանագրի փոփոխությունը չվավերացնելու և ընդերքօգտագործման իրավունքի փոփոխությունների փաթեթը չստանալու դեպքում, սույն հրամանը կհամարվի ուժը կորցրած.

4) ապահովել համապատասխան գրառումների կատարումն արդյունահանման իրավունքի հաշվառման գրանցամատյանում:

3. <<Հանրապետական երկրաբանական ֆոնդ >> ՊՈԱԿ-ի տնօրենին – ապահովել ֆոնդային փաստաթղթերում սույն հրամանից բխող համապատասխան գրառումների կատարումը՝ ընդերքի տրամադրման գործակալության կողմից փաստաթղթերի փաթեթի ստացումից եռօրյա ժամկետում:

4. Սույն հրամանը կարող է բողոքարկվել վարչական կարգով կամ վարչական դատարան՝ ուժի մեջ մտնելուց հետո 2-ամսյա ժամկետում:

5. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել *ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության աշխատակազմի ղեկավարին:*

ԱՇՈՏ ՄԱՆՈՒԿՅԱՆ